ԿԱՑԻԱ—ԱԴԱՄԻԱՆԻ !? *)

Վ Ի Պ

ԻԼԻԱ ՃԱՎՃԱՎԱՁԷԻ

«Բարեկամիդ երե՛սին պախարակիր,
Թշնամուդ՝ յետեւից»
Իմաստուն ասաց.

Ճարտասանութեան մէջ գրուած է, թէ մարդս ամէն բան ներածութիւնով պէտք է սկսի։ Ճշմարիտ է։ Մենք էլ այնպէս սկսենք։

Ով որ Լուսաբարի կերպարանքում ինքն իրան կը ճանաչի, ով որ Լուսաբարի մասին գրածները իւր գլխի վրայ կ՝ընդունի, նա, ինչ ասել կ՝ուզի, ցեխ գցել կը սկսի ու «գի՛ժ է, գի՛ժ է» կը կանչի այս գրուածքի անպէտք հեղինակին։ Թո՛ղ լաւ իմանան, որ մենք անձնաւորութեան հետ գործ չունինք. մենք գրում ենք մի հասարակական աստի մասին։

Ով ինչ ուզի թո՛ղ ասի, բայց ես արդարացնում եմ գլուխս այն խօսքի ճշմարտութեամբ, թէ «բարեկամիդ երեսին պախարակիր, թշնամուդ՝ յետեւից»։ Ո՞ւր ես արդեօք հիմայ, այդ իմաստուն խօսքի ասող։ Գիտեմ թէ ուր. ժողովրդի մէջն ես, անտեսանելի և ժողովրդինը։ Այն էլ գիտեմ թէ ինչ է անունդ. քեզ ժողովրդի հանճար են ասում։ Այն էլ գիտեմ, թէ ինչ յատկութեան տէր ես. անսխա-

*) ԺՈՂՈՎՐԴԻՆՈ?! (Մի թէ մարդ է-ազամորդի)։

լական ես ու մի՛շտ արդարու Դո՛ւ և միմիայն դու ես քաջալեր կանգնում նրան, ում սիրտը որ ուրիշի համար է ցաւում։ Եւ հենց այն ժամանակն ես քաջալեր կանգնում, երբ այդ «ուրիշները» սրտացաւի գլխին են տալիս նորա սրտացաւութիւնը իբրև մի յանցանք։ Ի՞նչ փոյթ։ Մարդ կայ որ իւր սրտացաւութիւնը հանդէս է բերում իւր սիրածի վատ կողմերն էլ գովելով, մարդ էլ կայ որ հէնց այդ վատ կողմերն է պախարակում։ Թէ այդ երկու տեսակ մարդկանցից ո՞րն աւելի սէր և սրտացաւութիւն ունի—թո՛ղ ինքն ընթերցողը գուշակէ։

I

Սիրուն բան էր իշխան Թաթքարիձէի տուն-տեղը։ Երևակայեցէք Կախեթի մի փոքր գիւղում մի ընդարձակ, ներքև իջած տեղ և այդ տեղում մի երկյարկանի, քարուկրից շինուած տուն։ Ահաւասիկ այդ յարկերն ինչ տեսակ էին. ներքևն էր եղեղնով ծածկուած մի մառան և այդ մառանի յետևի մասի վրայ բարձրանում էր մի փոքրիկ սենեակ իւր պատշգամբով։ Պատշգամբումը շինուած էր ծիծեռնակի բոյնի նման մի փոքրիկ տախտակած տեղ, որ ծառայում էր որպէս անկողնի պահարան։ Մի փոքր հեռու գտնւում էր տախտակապատ թոնրատունը, նրանից էլ դէնը՝ ամբարը, որի վրայ շինուած էր եդիպտացորենի միականի պահարանը՝ անբաղդ ու սգաւոր։ Կար նաև ցանկով պատած մի պարտէզ։ Ցանկի մօտ, մի թթենու կողքին երևում էր հին, ծղոտներից շինուած խրճիթը, որ ժամանակից այնպէս ծռւել էր մի կողքին, որ կարծես թէ պատրաստւում էր պառկել մի հով տեղում, բայց ոսկրացաւից տանջւող մի պառաւ կնոջ նման նորից ոտքի վրայ էր մնում։ Այդ դղեակի բակը թէ՛ լայնութեան և թէ՛ երկարութեան կողմից բաւական ընդարձակ էր։ Նա շրջապատուած էր մի հին ցանկով, որ տեղ տեղ քանդուած էր և նորա այժմեան տէրը երբէք մոքովը չէր անցկացնում նրան վերանորոգել։ Երևում է որ վրացի է...

Ցանկը մի տեղ վերջանում էր բակի մեծ դռներով, որոնց մի հատը, երկու տարուց ի վեր, այնպէս ողորմելի կերպով կախ էր ընկել մի օղակից, կարծես թէ սիւնը բռնել էր նրան ծեծելու, բայց նա յետ էր քաշւում, որպէս զի կարողանայ մի կերպով դուրս պրծնել

էլ նշանին չի դիպցնում. աջող ձեռք քիչ կա՞յ։ Հիմայ էլ կայ այդ ամենը, բայց չը կան այլ ևս այն սիրտը, սրտի այն ջերմութիւնը, այն հոգատարութիւնը կալուածքի համար, որ գիտէին լաւ ձին ու լաւ հրացանը լաւ գործերի համար բանեցնել։ Առաջ մարդն էր զարդ տալիս ձիուն և հրացանին, իսկ հիմայ ձին ու հրացանն են մարդուն զարդարում։ Լաւն էր հին ժամանակը, բայց ոչ էլ Բեսարիոն Գաբաշուիլիի հետևեալ խօսքն է անարդ. «Մի ունեմ-ը հաղար ունէի-ց լաւ է»։ Այդ ասենք ու լեզուներս կծկենք, թէ չէ...

Թէպէտև Լուարսաբը այդպէս նեղանում էր նոր ժամանակի այդ ախտի պատճառով, բայց այնուամենայնիւ նորա գէմքը մի առանձին տխմարութեամբ ժպտում էր ամեն օր։ Ասած է. «եզը եզան հետ որ կապես, կամ գոյնը պիտի փոխի կամ բնութիւնը»։ Այդ առածը ես ոչ մի տեղ այնքան իրականացած չեմ տեսել, ինչպէս իշխան Լուարսաբի տանը։ Նորա անգին լծակից իշխանուհի Դարեջանը ճիշդ իւր մարդու երկրորդ կոդն էր և էին երկոքեան «մի հոգի, մի մարմին», ինչպէս հրամայում է Սուրբ Գիրքը։ Եւ այն էլ ինչպէ՛ս. միևնոյն կլորութիւնը, միևնոյն պարարտութիւնը, միևնոյն ծիծաղկոտ դէմքը և համարեա թէ միևնոյն տխմարութի՛ւնը։ Այդ երկու սիրասուն ճնճղուկները՝ մի հոգի—մի մարմին դարձած՝ ապրում էին մի զարմանալի քաղցրութեամբ, հեռու աշխարհիս անհամ աղմուկներից։ Հէնց որ աքաղաղը խօսէր՝ երջանիկ ամուսինների աչքերը արդէն պլատրացած էին. Դարեջանն իսկոյն վեր կը թռչէր, իսկ Լուարսաբը, այդ քնքշացած Լուարսաբը, մի մի անգամ մի քիչ ծուլանալ էլ գիտէր։ Ուղղակի անկողնից, կուրծքն այնպէս քրքրուած, դուրս կը գլորուէր թախտի վրայ, մի տեսակ հևալով, ախ ու վախ անելով և էլ սատանան գիտի թէ ինչ օյիններով... Շատ էր պատահում որ մինչև ճաշ ուտելը նա մնում էր այդ մեղկ ու անհամ դրութեան մէջ։

Վրացիք ասում են թէ «ում մարմնի վրայ որ առատ մազ լինի դուրս եկած, նա երջանիկ կը լինի»։ Եւ իրաւ է. հէնց դորա համար են այնքան երջանիկ բոլոր անասունները։ Իսկ եթէ այդ սուտ է՝ հապա էլ ինչո՞ւ են մերոնցից շատերը անասնութիւն անել փորձում։ Նորա համար որ անասունները երջանիկ են լինում, և երջանիկ են՝ որովհետև մարմնի վրայ շատ մազ ունին։

Լուարսաբի ամբողջ մարմնի համար ի՞նչ կարող եմ ասել. սակայն նորա կրծքի համար կարող եմ պնդել, թէ այն աստիճան թանձր էր այնտեղ խոզի մազի պէս պինդ բուսականութիւնը, որ կասկածաւոր հոգևորները լաւ ապաստան կը գտնէին այնտեղ ահի տարին, բայց... բայց ի՞նչ. մի՞թէ Լուարսաբն երջանիկ չէր։ Այնքան արևշատութիւն թո՛ղ այս տողերի գրողին հասնի, ինչքան որ նորա հասակակից իշխանազուններ երանի էին տալիս նորա կենցաղավարութեանը։ Միայն հէնց նորա մարմնի մազը բաւական էր մի դժբաղդ մարդու նախանձը վառելու, եթէ միւս բոլորն էլ մի կողմ թողնէինք։ Եւ ի՞նչ էր պակաս Լուարսաբին. գո՞յնը թէ միա։ Մի՞թէ մտածողութիւնն ու հոգսը կ՝անհանգստացնէին նորա քունը կամ ախորժակը կը կապէին, ինչպէս մի հասարակ մարդուն։ Գոյնը լաւ, միսը տեղը. ուտել, խմելն և քնելը—խօ էլ ասել չի ուզի։ Էլ դրանից աւելին ինչ էին է պէտք վրացի մարդուն, նրան, որ իւր բաղդն ու դժբաղդութիւնը իւր մարմնի մազով է չափում և որի համար բնութիւնը կարդադրել է որ իւր օրերը ճանճ քշելով անցկացնէ։

Զը լինի՞ թէ վիրաւորուեցար, ընթերցող։ Ի հարկէ որ այո՛. այստեղ չը կայ ոչ սիրահարութեան ճարպիկութիւն, ոչ մարդասպանութիւն, ոչ անկոյս աղջկայ ախ ու վախ, ոչ ջրի մէջ ընկնել,—մի խօսքով այն ամենը ինչ որ շնորհք է տալիս մի զւարճացնելու համար գրուած շարադրութեան՝ այստեղ գոյութիւն չունի։ Կը նեղանաս, ինչ ասել կ՝ուզի, բայց այս էլ պէտք է քեզ իմանալ, ընթերցող, որ գրուածքիս հեղինակը ընթերցողներին զւարճացնելու համար չէ յատկացրել իւր չնչին աշխատանքը։ Ես կամենում եմ որ այս գրուածքը մտածել տայ կարդացողին և եթէ ցաւելու բան ունի՝ հէնց այդ պատճառով ցաւի, որովհետև մտածողութիւնն ու վշտակրութիւնը անբաժանելի քոյր-եղբայր են։ Ես կամենում եմ որ ընթերցողը ցաւի ոչ թէ նորա համար, որ սա զւարճալի չէ, այլ նորա համար որ սա մտածողութեան մէջ դցի նրան։ Եթէ այդքան յաջողի այս իմ աննշան աշխատութեան, ես այլ ևս դրանից աւելին ոչ ուզում եմ և ոչ ուզեցել, ի՛մդ վշտացած ընթերցող։ Իսկ եթէ կը յաջողի՞։ Ես գոնէ կը մխիթարուեմ նրանով որ օգուտ նստելուց զուտ աշխատելը գերադաս է։ Ո՛րքան անպէտք մարդ պէտքական է

շինում ու շինել այս օրհնված առաջը. ե՛ս էլ թող նրանց մէջ լինեմ...

Երբ որ Լուարսաբը վերևը նկարագրված վայելչութեան մէջ էր լինում՝ մի կատարեալ մահ էր նորա համար, երբ մէկը խանգարում էր նորա քէֆն ու մեղկութիւնը, այսինքն թախտի վրայ այնպէս ծիծաղելի կերպով գլոր-մլոր գալը։ Անմիտ ժողովուրդն ասում էր թէ նա հիւր չէր սիրում, բայց մի՞թէ դա առաջ էր գալիս նորա ժլատութիւնից։ Ամենևին։ Մի՞թէ գձձութիւնն ու վրացին կարող են միմեանց հետ հաշտուել։ Մի՞թէ սառուցն ու կրակը միմեանց չեն կլանի։ Հիւրին նա ատում էր այն պատճառով, որ ստիպված էր լինում վեր կենալ ու շորերն հագնել։ Բայց վերկենալն էլի ոչինչ, այդ այնքան էլ չէր դժուարացնում նրան. հագնուելն էր նորա հոգեհանը։ Ամբողջ ամառն այնպէս կ՝անցկացնէր, որ շապկից ու նորա ընկերից զատ ոչինչ չէր մտցնի իւր մարմնին. Ձմեռն էլի շապկի վրայ մի մուշտակ էր գցում, եթէ միայն մի մեծ հիւր չէր ունենում, ասենք օրինակ՝ գաւառապետին։ Այն միջոցին, որին որ սոյն գրուածքն է վերաբերում, խիստ մեծ անձնաւորութիւն էր գաւառապետը։ Հիմայ է որ, ինչ որ այդ անտէր ուսումն առաջ եկաւ, գաւառապետին ոչ ոք մեծ մարդու տեղ չէ գնում. թէ չէ առաջ, օ՛, ինչքան մեծ էր նա։

Բայց Դարեջանը այնքան ծոյլ չէր, ինչքան Լուարսաբը. այդ բանի մէջ, պէտք է մարդն ուղիղ խոստովանի, նրանք միմեանց չէին նմանում։ Ուրեմն հիմայ մենք տեսնում ենք որ նրանց գոյնը մէկ էր, բայց սովորութիւնը տարբեր։ Աչքը բաց անելուն պէս նա վեր էր թռչում թախտից, կապում ճակատը, փաթաթում մի չթի շորով, վրան գցում չթի դերիան (երբեմն, շտապելուց, շուռ տուած էր հագնում), բոբիկ ոտերը չստերի մէջ կոխում և—հա՛յդէ—ուղղակի դէպի բակի խրճիթը, որտեղ տիրում էին ինքնիշխան ծառաները, այսինքն բարկութեամբ զեղուն սրտով հաղիւ հաղ շունչ քաշում։ Թէ զարմանալի և թէ ծիծաղելի էր մեր իշխանուհու այդ օրինակ մի անհանգստութիւն։ Այդ ահագին քթոցի նման լքցած և կլորւած կինը յաճախ մնում էր առաւօտից մինչև կէսօր ոտի վրայ և թելի կծիկի պէս գլորւում դէս ու դէն։ Նա պարապ չէր, ինչպէս երևում է. այնտեղ մի բռնցքի հարւած կը տար կարի

վրայ կուացած փոքրիկ աղախնին, այստեղ գլխին կը չմփացնէր հին շորի կտորների մէջ փաթաթուած մուտ փոքր ծառային, որ յորանջելով ու ծոյլ ծոյլ մաքրում էր երեկոյեան համար դեռ ևս երեկուանից ճրագուուած մոմակալը. մի տեղ մէկից կը խռովէր, ինքն էլ չը գիտէր թէ ինչու, միւս տեղ մի ուրիշին մի լաւ կը խայտառակէր, դարձեալ առանց իմանալու թէ ինչ պատճառով. կ'անիծէր, կ'անարգէր, կը յանդիմանէր—մի խօսքով ինչ որ ամբողջ գիշերուայ մէջ հաւաքել էր՝ բոլորը թափ կը տար իւր ստորադրեալների վրայ ու յետոյ յոգնած և ուժից ընկած տուն կը վերադառնար. բայց եթէ ճանապարհին պատահէր նորից փոքրիկ աղախինը՝ դարձեալ մի քանի հարուած կը շնորհէր նրան, «գնտինը մանեսն» էլ աւելացնելով եթէ լաւ քէֆով էր՝ և այնպէս ուժասպառ կը գլորուէր դէպի սենեակը որտեղ ոռմբի նման փքուած իշխանը դեռ ևս շարունակում էր իւր թախտի վրայ գլոր—մլոր գալը ուհամարում էր, եթէ ամառուայ եղանակ էր, առաստաղի ճանճերը։ Մի անգամ նրանք մի խիստ ուշադրութեան արժանի վէճ սկսեցին։ Այդ էր ամառուայ մէջերքում, մի շատ տոթ օր, երբ Դարեջանը, աւարտելով վերուը նկարագրուած իւր ճանապարհորդութիւններից մէկը և սրա նրա գլխին թրմփացնելը, քրտինքի մէջ քամուած՝ մտաւ սենեակը։ Լուարսաբը նայեց և հէնց որ տեսաւ որ իւր կնոջ կարմիր թշերից քրտինքը ծործորում էր կաթիլ կաթիլ՝—մի կատարեալ գոհունակութեամբ ասաց իւր սրտում. «լա՛ւ ընտանիքի սիւն է, երախտաւոր կինարմատ է։ Փառքդ մեծ, Տէր, որ այսպիսի մէկին հանդիպեցրիր ինձ»։

Այդ ասաց ու մի կողքից շուռ եկաւ միւսի վրայ իւր բաղոից գոհ ու Աստծուց ու կնոջից միշտ շնորհակալ Լուարսաբը։ Այդ շուռ գալը նշան էր թէ նրան մի որ և է բան դուր էր եկել։

—Որտե՞ղ էիր, ցաւդ տանե՛մ, որ այդպէս յոգնել ես,—հարցրեց նա իշխանուհուն։

—Ինչպէ՞ս թէ որտեղ, ջանի՛դ մատաղ լինեմ ես, օջախ է, տուն է, կայք է, չէ՞ որ մտիկ տալ է հարկաւոր, ցա՛ւդ տանեմ ես։

—Այդպէս, ի՛մ Դարեջան, ա՛յդպէս, հոգուդ մեռնեմ ես. կին լինելն էլ հենց ա՛յդ է նշանակում։

—Հապա՛,—վրայ բերեց գովասանքից խրախուսուած իշխանուհին. պէտք է այդպէս տան աչք դարձած պտոյտ դալ ծառայող-

ներին մէջ, թէ չէ ուսելուց զատ էլ ոչինչ չեն շինի. Ծառաներին հսկել է հարկաւոր։

—Հապա՛, հապա՛։

—Նատերը չը գիտեն թէ ինչպէս կառավարեն նրանց։

—Զը գիտեն, հապա՛, չը գիտեն, որ գիտենան խօ լաւ բան կը լինի, հապա՛։

—Երբեմն հարկաւոր է լինում հէնց անմեղ տեղը նրանց յանդիմանել։ Որ մի լաւ էլ խայտառակես, վատ չի լինի։ Այ ես խայտառակում էլ եմ, անիծում էլ եմ, բարկանում էլ եմ—ինչո՞ւ, որպէս զի ահ ու պատկառանք ունենան, թէ չէ Աստուած հեռու պահէ...

—Աստուած հեռու պահէ... ի հարկէ...

—Սրանք ճորտեր են. թէ որ վարձած էշի պէս մի անգամ կանգ առնեն, էլ որ հունի դագանակով էլ վեր տաս՝ ոտը չես կարող փոխել տալ, թէ որ առաջուց խրատած չունենաս։

—Ի հարկէ՝ պէտք է խրատած պահես,—պատասխանեց կնոջ իմաստութեան վրայ հիացած Լուարսաբը—ի հարկէ՝ վարձած իշի պէս կը կանգնի։

—Մի ասա՛, ցաւդ տանեմ. ինչ որ ես ասացի՝ սո՞ւտ է։

—Սուտ ինչո՞ւ կը լինի. շա՛տ ճիշտ է։ Քո չափ կնոջ երազին էլ պէտք է հաւատալ,—դուրս աւեց առանց մտածելու Լուարսաբը։ Ինքն էլ չը գիտէր թէ այդ «երազը» որտեղից մոցրեց խօսակցութեան մէջ։

Երկուսն էլ լռեցին։ Լուարսաբը աչքերն յարեց առաստաղին. այնտեղ լուռմբ խուռմբ ճանճեր էին նստած։ Դարեջանն սկսեց բրդի գուլբայի գործելը։

Մի փոքր ժամանակից յետոյ Լուարսաբը ձայն տուեց։

—Դարեջան, հապա թէ խելօք կին ես, իմացի՛ր, հրե՛ն այն տախտակի վրայ քանի՞ ճանճ կայ։

—Ո՞րտեղ։

—Հրէ՛ն առաստաղի տախտակի վրայ։

Դու մի ասիլ որ այն անիծած Լուարսաբը երկուսի լուռ եղած ժամանակը այն ճանճերն է եղել համարելիս։ Դարեջանն ինչպէ՞ս կարող էր գուշակել։

—Քանի՞, հարցրեց Դարեջանը։ Համբերիր մէկ համարեմ։

—Այդպէս խօ ես էլ կարող եմ գուշակել։ Թէ մարդ ես, այնպէս իմացիր։

—Այնպէս իմանա՞մ։ Դէ լաւ, երեսուն հատ կը լինի։

—Շատ անշնորհք ես, չիմացար։

—Հապա քանի՞։

—Քանի՞, ասե՞մ... չէ՛, չեմ ասի։

—Ասա՛ էլի, թէ գիտես։

—Թէ ես մարդ եմ, քառասուն պէտք է լինի։ Անշնորհքը դու ես, իմացայ։

—Հրամա՛ն քեզ, իմացա՛ր... համարել ես, ինչպէս որ անցեալ օրն արիր. այդպէս խօ ես էլ կարող եմ իմանալ։

—Դու չը մեռնես, այն պատուական հօրս գերեզմանը վկայ, որ չեմ համարել։

—Հապա ո՞րտեղից գիտես թէ քառասուն է։

—Ո՞րտեղից. այնտեղից, որ բանականութիւն ունիմ։

—Բայց մի՞թէ ես զուրկ եմ բանականութիւնից։

—Դու էլ ունիս, բայց մարդու խելքին կնոջ խելքը կարող է հասնե՞լ։ Ես ենթադրեցի որ քառասուն պէտք է լինի։

—Իսկ եթէ քառասուն չ՚եղա՞ւ։

—Տուգանքի ենթարկիր ինձ։

—Ուրեմն համարե՛նք։

Մարդ և կին սկսեցին ճանճերի համրելը։ Բանից դուրս եկաւ, որ յիսունից աւելի էին նրանք։

—Իմացա՛ւ, ասաց մի առանձին շեշտելով Դարեջանը. իմացա՛ւ։ Խե՛լք ունի այս իմ պարոնս, նորա համար իմացա՛ւ։

Լուարսաբն ամաչեց, մի քիչ դժուար տեղն ընկաւ։

—Թուել են, թէ չէ քառասուն հատ էին,—ասաց տխմարը իւր գլուխն արդարացնելու համար. հաւատա՛ որ թուել են։

—Աւելի լաւ թէ թուել են. չէ՞ որ աւելի պակաս պէտք է մնացած լինէին հիմայ։ Այստեղ յիսունիցն էլ աւելի է դուրս գալիս հիմայ։

Լուարսաբն ընկճուեց, նա զղջաց իւր անմիտ վարմունքի համար։

Որպէս զի իւր որոգայթ ընկնելը անկասելի անէ, նա ատամ-ները կրճտացնելով, որին իշխանուհին ժպտալ էր անուանում, ասաց.

—Աստուած անիծի՛, այդ բնաւ մտքովս չ՝անցաւ, չէ՞ որ չորս անգամ համարել էի։

—Թէ որ չէի՞ր համարել։

—Այդ ի՞նչ խօսք է, որ համարած չը լինէի՝ Սողոմոն իմաստունը իսօ չէի որ այնպէս գուշակէի։ Ինչպէ՞ս թէ չեմ համարել—այ Աստուած անիծի՛—սխալուեցայ թէ չէ անպատճառ կը յաղթէի քեզ։ Ես ու իմ Աստուած՝ կը յաղթէի, հոգիս։

Ասաց և յաղթութիւնը ստանուլ ուած Լուարսաբը շաքարի պէս քաղցրացաւ յաղթութիւնը տանող իշխանուհու համար։

—Թէ չէ՞իր համարել, տօ սատանայ—պատասխանեց նոյնպէս ժպտալով իշխանուհին։

—Խօ կոտրուեցայ, հոգի՛դ ուտեմ, էլ ի՞նչ ես ուզում։

—Ողջութիւնդ ու երջանկութիւնդ, ի՛մ սիրունիկս. ուրիշ ինչ պէտք է ուզենամ։

—Դարեջա՛ն .. ձայն տուեց Լուարսաբը սրտապակաս ու ամաչած—Դարեջա՛ն... թէ ինձ կը սիրես, «սիրունիկս մի՛ կանչիր ինձ։

—Ինչո՞ւ, ցաւդ տանեմ, ինչո՞ւ։

—Իմ հասակով մարդուն չի սազում, հոդուդ մեռնեմ. «սիրունիկ» փոքրիկ շանը կ՝ասեն, մի՞թէ դա մարդու լայեղ անուն է։

—Եւ մի՞թէ դու իմ շնիկը չես։ Զե՞ս էլի։ Ես այդ առաջին անգամն եմ լսում քեզանից, ասաց հոգոց հանելով Դարեջանը, մտածելով որ եթէ նա այսօր շնիկ լինելուց է ձեռք քաշում, վաղն էլ մի ուրիշ բանից կը քաշի։

Լուարսաբը գլխի ընկաւ, որ նորա սիրտը ցաւացրեց և այն էլ իզուր ուեղը. որպէս զի նորա շուռ եկած սիրտը հանգստացնէ, ասաց ատամները կրճտացնելով.

—Հա՛, ցաւդ տանեմ, հա՛. քո շնիկդ եմ, հապա ի՞նչ եմ։

—Ի՞նչ շնորհալի կին-արմատ է եղել այս օրհնածի որդին—ասաց նա իւր մտքումը—ի՞նչպէս մի լաւ աշրդի նման սազացրեց իմ շնիկ լինելը... ի՞նչ լեզուի տէր է... ի՞նչպէս յարմարեցրեց։

Ինքն էլ ուզեց մի այդպիսի փաղաքշական բառ գտնել, բայց հէնց որ մի այդպիսի դժուար տեղն էր ընկնում, իսկոյն միտն էին

գալիս լաւ զուրգէլ, թարթի դոշ, սխտորով արտալայ և այլն։ Հապա այդպիսի բաների վրայ մտածելիս էլ ինչ փաղաքշական խօսքեր ստեղծէ մարդս։ Բայց Լուարսաբը էլի մի լաւ աղի խօսք սազացրեց.

—Իսկ դու գիտես իմ. ի՞նչն ես—հոգուս կոտեմը, սրտիս տարխունը, խելքիս—հապա ի՞նչն ասեմ—թէկուզ աղը եղի՛ր հա՛։ Ասա՛, լա՞ւ ասացի թէ չէ, թէ այն պատուական ու անուանի հօրդ հոգին կը սիրեա։ Լաւ չը սազացրի՞։

Դուրս ուեց այդպէս և, ի նշան իւր զոհունակութեան, կրճտացրեց ատամները՝ իւր շնորհքի վրայ հիացած Լուարսաբը։ Դարեջանն էլ շատ ուրախ էր։ Ցաճախ էին այդպէս իրանց ժամանակն անցկացնում մեր ամուսինները։ Երանի՛ նրանց, ընթերցո՛ղ...

III

Լուարսաբն էլ գիտէր ծառաներին ահ տալը, ինչպէս ինքն էր ասում։ Ճիշդ է որ մի քիչ ծոյլ էր, բայց չէ՞ որ այն ահագին կալածին էլ հսկել պէտք էր։ Այդ կալածքի հոգատարութիւնը երբեմն նրան սթափեցնում էր ու ստիպում թախտից վեր թռչել։ Այն ժամանակ պէտք է տեսնէիք թէ որչափ սիրուն էր մեր Լուարսաբը։ ոտաբոբիկ, ղալմուխի կապոյտ գլխարկը գլխին, կարմիր շապկով ու նրա անբաժանելի ընկերով, գզգզած կրծքով, ուռած փորով, չիբուխը ձեռին՝ մօտենում էր տմբտմբալով պատշգամբին ու կանչում քնից թանձրացած ձայնով իր կաուավարիչ Դաթօին.

—Դաթո՛, միսը բերել ես բազարից թէ չէ (այն գիւղում շուկայ էլ կար)։

—Հրամեր էք, ցաւդ տանեմ։

—Ի՞նչ կտոր է։

—Զալաղաջ։

—Իսկ խորուածացո՞ւն։

—Սուկի եմ գտել, ցաւդ տանեմ։

Հազուագիւտ մարդ է սա,—կը մտածէր ինքն իրան ճորտերի տէր Լուարսաբը։ Ցետոյ կասէր Դաթօին. ապրի՛ս իմ Դաթո, ապրի՛ս. թէ մարդ մուռանայ, Աստուած չի մոռանայ պարոնի արած լաւութիւնը. ապրիս. դու իմ աջ ձեռքն ես, պի՛նդ ձեռքս։

Դաթօն գլուխը քորում էր ու անշնորհք կերպով ժպտում այդ գովասանքները լսելով։

—Պարտէզպանը կանանչի բերե՞լ է, հարցնում էր դարձեալ պարոնը։

—Բերեց։

—Տարիուն լսօ կայ մէջը։

—Կայ։

—Վարո՛ւնգ։

—Վարունգ էլ կայ։

Լուարսաբն ուրախացաւ. եթէ այնտեղ մի թախտ լինէր, գոնէ նա մի անգամ կը գլորուէր նորա վրայ։

—Ուրեմն տուն լիքն է եղել,—ասաց պարոնը մի առանձին հաճութեամբ։

—Ե՞րբ է պակասութիւն եղել, ցաւդ տանեմ, տանդ մէջ որ հիմայ լինի...

—Այդպէ՛ս, սիրելի Դաթօ՛, պարոնի օջախի պատիւն ու անունը պէտք է անձնանուէր ճորտը աշխարհի առաջ բարձրացնէ, ապրի՛ս։ Դատարկ էլ որ լինի՝ դու պէտք է ասես թէ լիքն է։ Դու փորձուած մարդ ես, ամէն բան գիտես։

—Այս հասակի մարդ քո ձեռքումդ եմ դարձել, ցաւդ տանեմ, մի՞թէ կարելի է որ չիմանամ։

—Հիմայ մէկ այս էլ հարցնե՛նք,—մտածեց մի քիչ յետոյ հոգատար Լուարսաբը.—սայլերը ճանապարհ ես դրե՞լ։

—Ճանապարհ դրի, ցաւդ տանեմ, հիմայ արգէն բաւական տեղ գնացած կը լինեն։

—Ի՞նչ տեղ ուղարկեցիր։

—Արտը, ցաւդ տանեմ։

—Քանի՞ հատ է։

—Զորսը պարոնի և տասը ճորտերի բաժնի համար։

—Ի՞նչու ճորտերինը տասնըհինգ հատ չէ։

—Տասնըհինգ հատ մենք երբէք լծած չենք, ցաւդ տանեմ, այսօր ինչպէս կարող էինք լծել։

—Տասնըհինգ հատ պէտք է լինէր, տօ՛. ինչո՞ւ չը լծել աւիր։ Ես չը գիտեմ, պէ՛տք է տասնըհինգ հատ լինէր։ Ի՞նչպէս կարելի

էր։ Պէտք է պարոնին ծառայեն. ուրեմն ես էլ պարոն չե՞մ համարուում... լսա՞ծ է այդպիսի բան... փի՛է, տանըհինգ հատ պէտք է լինէր։ Ես նրանց ցոյց կը տամ որ ես պարոն եմ ու նրանք ճորտեր։

Ճիշտ որ երբէք տասից աւելի լծուած չէր եղել, էլ ի՞նչն էր ստիպում Լուարսաբին այդպէս առանց այլևայլութեան չարանալ։ Դաթօն էլ ոչ մի կերպ չէր կարողանում բացատրել. նա սկսեց ուշի ուշով զննել իր տիրոջը, թէ արդեօք չէ՞ գժուել նա։ Ի՞նչ պտուղ էր մեր Լուարսաբը որ գժուէր է՛... Այդ սուտ խռովելու պատճառները նա արդէն իր գլխումը շարած ունէր։ Նա էլ, ինչպէս իր թանկագին իշխանուհին, ունէր իւր որոշ հայեացքները ծառայողներին ու ճորտերին կառավարելու մասին։

—Գիւղացիներին պէտք է այդպէս հուպ տայ պարոնը, ասում էր յաճախ դիւանագէտ իշխանը. ա՛յդպէս է պէտք, որպէս զի ամէն Աստծու օր նրանք վախ ունենան. թէ չէ նրանց որ խոզի կծողների պէս ոտիդ նստացնես՝ գլխիդ կը բարձրանան քիչ քիչ։ Հապա՞. ահն է ծնում սէրը։

Ի հարկէ, սիրելի Լուարսաբ, ի հարկէ։

Բայց ամենևին չէր հասկանում մեր երջանիկ իշխանը, որ այդպիսի անհիմն ու սուտ բռնկումների մասին բոլորովին ուրիշ կարծիք ու եզրակացութիւն է կազմում գիւղացի մարդը։ Է՛հ, ընթերցող, դու ինչ կ՚ուզես ասա, բայց այդ ամուսինները համոզուած էին որ եթէ փորները կուշտ ունէին՝ դրանով պարտական էին իրանց՝ այդ տեսակ ճորտերին՝ լաւ կառավարելու ընդունակութեան։

Այսպիսի մի տխմարութեան մեր մաքրասիրտ իշխանը առում էր ծառաներին «ահ ուտացնել»։ Նա համոզուած էր, որ այդ ահ տալը այնքան անհրաժեշտ էր օջախի համար, որքան անհրաժեշտ էր ուտել-խմելը մարդու համար։ Այդ պատճառով էլ, երբ նա վերադառնում էր իր սենեակը, ասում էր կնոջը մի ինքնագոհ սրտով.

—Հազի՛ւ հազ ճանապարհ դրի սայլերը (մեր Լուարսաբը սուտ խօսել էլ էր սիրում), հազի՛ւ հազ։ Աստուած անիծի ճորտերին. մինչև որ գլխներին չը կանգնես ու չը գոռաս, ոչ մի բանի ձեռք չեն դիպցնի։ Այսպէս էլ բան կը լինի՞։ Ես որ չը լինէի՝ արտերս դաշտումը կը փտէին։

—Այդպէ՞ս, ցաւդ տանեմ,—քաջալերում էր նրան Դարեջանը—ա՛յդպէս է պէտք։ Այն օրից, որ Եւան Աղամին փորձանքի մէջ գցեց, Աստուածանից պատուէր ունենք որ մեր քրտնքով հաց ուտենք։

—Այդ խօ իշխանների համար չէ ասուած,—վրայ բերեց Լուարսարը։

—Այն ժամանակ իշխաններ ո՞վ էր տուել։

—Ինչպէս չէ, կայի՛ն. մեր ցեղը այն ժամանակներիցն է սկսում։

—Ի՞նչ ես ասում։ Այնպէս ես խօսում, կարծես թէ ոչինչից տեղեկութիւն չունիս։ Այն ժամանակ Ադամից և Եւայից զատ ոչ ոք չը կար. Ադամը խօ իր գլխի վրայ թագաւորութիւն (իշխանութիւն) չէր անի։

—Ճիշտ է, այդ բոլորովին միտս չ'եկաւ։ Ասա խնդրեմ, ա՛ կին, այն ինչ ծառ էր, որից որ պտուղ գողացան նրանք։

—Ծառ բարեոյն և չարի։

—Հիմայ այնպիսի ծառ էլ չը կա՞յ արդեօք։

—Ինչպէ՞ս չէ. ասում ;են որ Ռուսաց թագաւորի այդում մի ոսկի սենեակ կայ ու նրա մէջն է այդ ծառը՝ յակինթի տերևներով։

—Զմրուխտի տերևներով կը լինի, ուղղեց Լուարսարը։

—Այո՛, ճիշտ զմրուխտի, զմրուխտն էլ տերևի պէս կանաչ է. այո՛ զմրուխտի, մրգի տեղ էլ ադամանդներ ու յակինթներ բուսած վրան։

—Երանի՛ ինձ ուտացնեն. ա՛յ համը նրա մէջը կը լինի, հա՛։

—Ո՞վ կը թողնի որ մօտենաս. աւաղից շատ զօրք կայ նրա բոլորտիքը ժողոված։

—Հապա սուլթանն ի՞նչպէս է գողանալ տուել։

—Ահա թէ ինչպէս. մի դև է եղել որ արծուի կերպարանք է առել, ծածուկ տուն մտել, պոկել է մի մեծ ադամանդ, կուլ տուել ու նորից դուրս ծլկուել։

—Տարե՞լ է ու տարե՞լ. ի՞նչ սատանայ է եղել։

—Հապա՛, տարել է։ Ցեռոյ թագաւորին ներս է գնացել տեսել որ մի մեծ ադամանդ պակասել է. նա իսկոյն իմաց է տուել ռուսաց թագաւորին։ Ռուսաց թագաւորն էլ իսկոյն գլխի է ընկել որ դա սուլթանի բանը պէտք է լինի, պատերազմ է սկսել նրա հետ. և այդ պատերազմն է որ մինչև հիմայ էլ դեռ չի վերջացել։

—Ուրեմն նա մարսեց էլի՞։

—Ո՞վ գիտէ, դեռ պատերազմը շարունակւում է։

—Երանի՜ ես էի գողացել։

—Խօ կը խեղդէի՞ն քեզ։

—Ես որ չէի՜ իմաց տայ. ես կուլ կը տայի, խօ չէին կարող փորս ճղել։

—Կը ճղէին էլ ու ամեն բան էլ կ՚անէին։

—Որտե՞ղից պէտք է իմանային թէ ինձ մօտ է։

—Կարծես թէ չէին կարող մի գրբաց գտնել ու հարցնել նրան։

—Ձի՛շտ, այդ միտս չ՚եկաւ։ Կա՛ց, ի՞նչ եմ ասում. Ադամի կերածն ի՞նչ եղաւ, մարդ ասի։

—Ասում են որ մի կզգու թագաւոր գտել է ու պահել իւր մօտ։

—Հապա մի նայի՛ր Աստծու դատաստանին. աւելի լաւ չէ՞ր լինի որ ես գտնէի։

—Ցետոյ ո՞վ կը թողներ քեզ մօտ։ Երկու հարիւր տարի է որ ցամաքի թագաւորը կռիւ է մղում կզզեցիների հետ։

—Եւ չը կարողա՞ցաւ յետ խլել մինչև հիմայ։

—Ո՛չ։

—Վա՛յ, վա՛յ, վա՛յ, նա էլ մի զօրեղը չէ եղել։

—Ի հարկէ զօրեղ է. էլ ի՞նչ թագաւոր է որ զօրեղ չը լինի։

—Հիմայ որ Էրակլ թագաւորը ողջ լիներ, անպատճառ յետ կը խլէր. խիստ մեծ տղամարդ են ասում նրա համար։

—Ի հարկէ նա կը խլէր, բայց ո՞ւր է նա։

—Մեղք չէ՞ որ նա հիմայ հողի տակ փթթելիս լինի և քո տեղը Դաւիթը կենդանի՞։

—Տես է՛ այս փուճ աշխարհի վատամարդութեան. Թամար թագուհին պէտք է գետնի տակ լինի՞ և քո հարս Էլիսաբէթը արևին նայի՞։

—Է՛հ, այդպէս են այս փուճ աշխարհի բանները,—վրայ բերեց Լուսարսաբը և այնպէս հոգոց քաշեց, որ եթէ մոմ լիներ առաջը գրած՝ կը հանգցներ։

Առաւօտները, երբ որ մեր Լուսարսաբն և նրա կին Իշխանուհի Դարեջանը կը կատարէին իրանց դէպի օջախն ունեցած պարտակա-

նութիւնները (ինչպէս որ տեսանք վերը նկարագրած նմուշից), կընատէին չայի ու կ'ուռչէին փառաւորապէս տաք ջրից, ինչպէս որ ասում է մեր հասարակ ժողովուրդը։ Մի փոքր միջոցից յետոյ, երբ նրանք արդէն մի երկու խելացի վիճաբանութիւն ունեցած էին լինում (վերևը նկարագրուած տեսակներից), հասնում էր ճաշելու ժամանակը և նրանք, «հին սովորութեան» համեմատ մի լաւ կշտանում էին։ Լուարսաբը յոգնած ու ախորժալի ձայնով արտասանում էր. «փա՛ռք քեզ, տէ՛ր, որ այսպէս կշտացրիր ինձ»։ Այդ ասելուց յետոյ իսկոյն «սուփրից» գլորում էր թախտի վրայ ու. մի կատարեալ գոհանակութեամբ իւր կենցաղավարութիւնից, խփում էր ձեռքը փորին ու մի առանձին պարծենկոտութեամբ արտասանում. «թէ որ ես անուսում եմ... ինչպէս են ասո՞ւմ... քաղցացութիւնից գուցէ սատամքաս հալւում է... դրսիցն էլ նկատւում է գուցէ փորիս վրայ»... Փորձի համար մի անգամ էլ խփում էր ձեռքը փորին որպէս զի ստուգէ թէ նա ճիշտ լի՞քն է արդեօք. և երբ որ համոզւում էր թէ նա լաւ լցած է արդէն, ձիու նման կրճտացնում էր ատամները և մեծ բաւականութեամբ դարձեալ ասում. «այո՛, Լուարսաբը անուսում է, դրա համար էլ այսպէս քաղցած է»։ Ճաշից յետոյ քնել, յետոյ զարթնել, ապա թէյ խմել, յետոյ ընթրել, վերջն էլի նոյն ցանկալի քունը մտնել—այսպէս քաղցր ու անվրդով էր անցնում այդ երկու անարատ հոգիների կեանքը այս փուճ աշխարհում. փուճ աշխարհ, որը այնպէս ոչինչ տեղեկութիւն չունէր նրանց ո՞վ լինելու մասին, ինչպէս որ նրանք բնաւ ոչինչ չը գիտէին Աստծու ստեղծուած այդ փուճ աշխարհի մասին։

IV

Այս դրութեան մէջ և խելքի իմաստալի վարժութեան մէջ անց էր կենում առաւօտը։ Ճաշից յետոյ, երբ արդէն նրանք մի լաւ քնած պրծած էին լինում, երբ երեկոյեան զեփիւռը՝ բաց անելով իւր թևերը՝ հովանաւորում էր այգու ցանկի երկարութեամբ տարածուող ստուերածածկ բակը—իշխանուհի Դարեջանը հրամայում էր փռել այդ հով տեղում մաղը թափած մի գորգ ու նստում վրան որպէս մի ինքնահաւան նորահարս՝ գլուխը կապած, յոնքերը հուպ տուած

ու զալլուած։ Լուարսարն էլ՝ իւր անբաժանելի չիբուխը ձեռքին՝ ներքև էր իջնում, քոշերը բորիկ ոտներին, յաճախ միմիայն կարմիր շապկով և աւելի յաճախ էլ կապոյտ, ծիծաղելի կերպով մի կողմը կոտրած, կալմուխի գլխարկով. իջնում էր ու զբօսնում, յետ ու առաջ գնալով այդ ստերաձաձկ տեղում։

Երեկոյեան պահը—ինչպէս սր ձեզ յայտնի է—հիւրին յատկացրած ժամանակ է մեր գիւղերում, նա մանաւանդ Կախեթում։ Ինչ ասել կ'ուզի, որ ինչ որ այս անիծուած լուսաւորութիւնը ներս ընկաւ մեր աշխարհը՝ քիչ թէ շատ մեր այդ հին, գովելի սովորութեանն էլ խանգարեց. այնպէս որ հիմայ երբեմն միայն կը պատահես լուսաւորուածներին այդ միջոցին հիւր գնալիս, մինչդեռ երեկոյեան պահը մեծ պատիւ էր վայելում հին ժամանակ։ Այդ պատճառով էլ երեկոները մեր Դարեջանը այդպէս զուգում էր և մինչև իսկ—ներեցէք այս խօսքիս համար—յետոյքի բարձն [1]) էլ սարքում։ Այն միջոցին, որի մասին ես գրում եմ սոյն տողերը, գեռ ևս կրինոլին չը կար. և եթէ լինէր էլ՝ ո՞վ կը հասցներ մինչև այն գիւղը այդ «իւբկերի» թագուհուն։ Ամեն ոք լաւ գիտէ, որ լուսաւորութիւնը ծանր քայլով է մանգալիս, նամանաւանդ մեզանում. ուրեմն էլ ինչպէս կարող էր հասնել այն գիւղը այդքան շուտ այն անուանի «խաբարտանու։ Ճիշտն ասած, այդ լուսաւորուած կրինոլինը չէր կարող տեղաւորուել գիւղերի շատ նեղ փողոցներում, եթէ հասած էլ լինէր այնտեղ։

—Աստուած կեանք տայ մեր աղջիկ-պարոնին,—ասաց նրան մի անգամ «կաւերը» ուղղելով ու շրթունքը ծռմռելով մի լաւ կազմուածքով սիրուն գեղջկուհի—նորահարս։

—Այ Աստուած քեզ պահի, ի՛մ Բաբալէ, ի՞նչպէս ես, խալա՞ւ ես,—հարցրեց իւր կարգին Դարեջանը, բայց այն եղանակով որ իշխանական պատիւը մազաչափ անգամ փոքրացած չ'երևայ։

—Էլ ի՞նչպէս պէտք է լինեմ, ցաւդ տանեմ. մեր գովէշը մտած է եղել ձեր այգին և վերակացուները այս երկու օր է բռնել պահել են այնտեղ։ Հիմայ այս եմ պաղատում, ցաւդ տանեմ, որ ներել

---

[1]) Դեռ ևս շատ տարիներ սրանից առաջ վրաստանում սովորութիւն կար գործածել ալժիանն Նորագիւտ համարուած «տաւրնիւրը»։

Ծանոթ. թարգ.

տաս մեզ այդ պատահմունքը ու դրա փոխարէն կը խնդրեմ Արարիչ Աստծուց քո արևշատութիւնը։

—Ի՞նչ. ուզում ես ասել որ դուրս թողնե՞լ տամ։

—Այո՛, թէ արևդ կը սիրես. հիմայ մեր աղաչանքն էլ այդ է, աղջիկ պարոն։

—Ի՞նչպէս կարելի է, սիրելի Բաբալէ. ճիշտ է մեր մէջ խնամութիւն էլ կայ, բայց չէ որ յետոյ ամբողջ գիւղը իրարու կ'անցնի։ Ամէնքն էլ կըսկսեն նոյնն անել։

—Մի՛ մերժիր, թէ պարոնի արևշատութիւնը կը սիրես. դրա փոխարէն ես պատրաստ եմ ձեզ ամէն տեսակ ծառայութիւն անել. ահա՛ հիմայ էլ մի կապ մետաքս եմ բերել ձեզ համար ու թէ որ Աստուծով ու ձեր ողորմածութեամբ էլի մի բան կարողանանք — ձեր ակամ՚ջ-կտրած ճորտերն ենք։

Բաբալէն գրպանից հանեց մի կապ մետաքս և շնորհեց իշխանուհուն։ Իշխանուհին վերցրեց, իւր տակը դրեց ու ասաց։

—Մի՞թէ առանց այդ էլ իմ կարողութեան համեմատ չէի աշխատի քեզ համար։ Լուարսա՛բ, Լուարսա՛բ, — ձայն տուեց նա իւր մարդուն որ մի քիչ այն կողմը յետ ու առաջ էր քայլում ու մի աչքածակի հայեացքով ոնտղում գեղեցիկ Նորահարսին։

Լուարսաբն եկաւ։

—Քա՛, վերակացուները բռնել են Բաբալէի գոմէշն և սա խնդրում է քեզ որ արձակել տաս։

Լուարսաբը նայեց Նորահարսին, որ սովորութեան համեմատ երեսը շուռ տուեց մի կողմը։ Լուարսաբը կրճտացրեց իւր ատամները բաւականութիւնից ու աշխատում էր ժպտալ։

—Գոմէ՞շը...

—Հա՛, գոմէշը,—վրայ բերեց Դարեջանը. ա՛յ մի կապ մետաքս էլ է բերել քեզ շնորհելու։

—Ուրեմն լա՛ւ... Դաթո՛, այ աղայ—Դաթո՛, —գուռաց նա՝ գնա՝ վերակացուներին ասա որ իմ սանամոր գոմէշն արձակեն թէ չէ կերթամ քար ու քանդ կանեմ բոլորը։

Ասաց, մի անգամ դարձեալ կրճտացրեց ատամները ու գնաց հպարտ հպարտ՝ որպէս մի յաղթանակը տարած մարդ՝ դարձեալ յետ ու առաջ քայլելու։

—Ա՛յ Աստուած դրանից էլ աւելի մեծութիւն ու պատիւ տայ ձեզ, բախտաւորացնէ և մի լաւ արու զաւակ շնորհէ ձեզ, որպէս զի ծիծս ուտացնեմ նրան, ձեր ցաւը տանեմ ես, ձեր ցա՛ւը, իմ պարոն ու իմ աղջիկպ-արոն։

—Ջեսա՞ր,—ասաց իշխանուհին, երբ որ Լուարսաբն այն կողմը գնաց.—տեսա՞ր ինչ սպառնալիք ուղարկեց. ասում է «բոլո՛ր քար ու քանդ կ՚անեմ»։

—Իշխանութիւն ունի, ցաւդ տանեմ ու նրա համար։

—Այդ խօ այդպէս է, բայց մե՛ծ անուն էլ ունի հանած գիւղում։ Վեր ա՛ռ, օրինակ, իմ տեգր Դաւթին. նրան ոչ ոք մարդատեղ չի գնում։

—Է՛հ, ցաւդ տանեմ, մի՞թէ նրանց ոտը կարող է ձգուել մինչև ձեզ, Էլիսաբէդն էլ թաւադի որդու կի՞ն է և դո՞ւք էլ։

—Հապա հիմայ նրան հարցրո՞ւ. նրա չափ մեծ մարդ այստեղ ամենևին չը կայ։

—Նրանց գլխի արևը։ Երէկ մեր հարևանի մօտն էի, նրանց աղախինն էլ այնտեղ էր եկել։ Ինչոր նա նրանց մասին խօսեց՝ ամենևին մի աղամոդուց լսած չէ։

—Ի՞նչ էր ասում, հոգուդ մեռնեմ, ի՞նչ,—հարցրեց շտապով ու անհամբեր Դարեջանը։

—Էլ ինչպէ՞ս թէ ինչ. այն որ՝ խեղճ աղջիկը իւր մատների աշխատանքով հաւաքած փողով մի չթի գլուխ կապելու էր առել և նա տեսել, խլել է նրանից։ Հիմայ նա ունի կապած գլխին։ Աղախնի մեղքից չենք կարողանում դուրս գալ, իմ աղջիկ-պարոնի արևը վկայ, այնպէ՛ս կոտրած սրտով պատմում էր այդ թշուառականը։ Ես, որ ձեր ոտի հողն էլ չեմ կարող լինել, լայեղ չէի անի՝ հօ՛րս հոգին վկայ։

—Ո՛ւյ, ո՛յ, տես ի՞նչ անիծուածն է եղել։ Էլ ինչպէս է դրանից յետոյ նա իրան թաւադի որդի անուանում։ Խլելը դեռ ոչինչ, այդ—ինչ ասել կ՚ուզի—աղջիկ-պարոնի կամքիցն է կախուած. աղախինն էլ իմն է ու չթի կապելուն էլ։ Բայց աղախնու չթի փաթաթանը գլխին դնելն է խաղք-խայտառակութիւնը։ Հիմայ նա՛ էլ իրան մարդատեղ է դնում էլի՛, ա՛յ հոգե՛մ նրա գլուխը։ Նա՛ էլ մեր մէջն է խառնուում ու իրան թաւադի-որդու կին համարո՞ւմ։ Էլ ուրիշ բան չի՞ ասել աղախինը։

—Ո՛չ, էլ ոչինչ չի ասել։

—Մի՛ ծածկիր ինձանից, Բաբալէ ջան։ Խօ գիտես որ ես քո լաւութիւն ուզողն եմ. թէ էլի բան է ասել՝ ասա՛ ինձ։

—Ոչինչ չէ ասել, հօրս գերեզմանը վկայ. թէ չէ որ ասէր՝ ինչո՞ւ կը թաղցնէի։

—Ո՞վ գիտէ, կարելի է դու վախենալիս լինես։

—Քեզպէս ողորմածի մէկը որ ինձ քաղցր աչքով նայելիս լինի՝ էլ ի՞նչ վախի խնդիր կարող է լինել։

—Ես էլ հէնց այդ էի ուզում ասել, սիրելի Բաբալէ։

—Ճշմարիտ է մենք աղքատ մարդիկ ենք, բայց այդքանն հասկանում՝ ենք։ Ո՞ւմից պէտք է վախենամ, քանի որ ձեզ այստեղ ունեմ։

—Ուրեմն էլ ուրիշ ոչինչ չի ասե՞լ։

—Ինձ չը թաղես, որ ամենևին ոչինչ չի ասել։

—Ասած կը լինի։

—Այն միակ, մինուճար որդիս մեռնի թէ բան ասած լինի։

—Ճիշտ, երեխադ ինչպէ՞ս է,—հարցրեց մի քիչ յետոյ Դարեջանը, տեսնելով որ այլ ևս ոչինչ չէ դուրս գալիս։

—Էլ մի՛ հարցնի, ցաւդ տանեմ, աղջիկ-պարոն. թշնամիդ էլ թող այնպէս չը հիւանդանայ ինչպէս երեխաս է։ Էլ ի՞նչ մնաց որ չ՝արի, խոսի մէջ չը լողացրի՞, աղօթել չը աւի՞, ձեռքին փող չը կապեցի՞ [1]), բայց ոչինչ չ՝օգնեց. Աստուած թող թշնամուդ այդպէս անօգնական պահի։ Ինձ սովորացրին որ ձեզ դիմեմ. ասում՝ են որ խիստ զօրաւոր աղօթք գիտէք դուք, ի սէրն Աստծու խաթեր՝ օգնեցէք ինձ ու Աստուածանից ստացէ՛ք փոխարէնը։

—Ես միայն գլխացաւի ու թունաւորուածի աղօթել գիտեմ. մի՞թէ երեխայիդ հիւանդութիւնը գլխացաւ է։

—Այո՛, արևդ սիրեմ, գլխացաւ է. քիչ է մնացել որ գլուխը տուաքացնի։

—Աղջի՛, Լամազիսսէուլ, ճղաւեց իշխանուհին. գնա՛ գրիչ-թանաքատան, թուղթ ու թաղիքի տակը որ գրուած նամակ կայ՝ բեր

---

[1]) Յօգուտ սրբերի։

Մանոթ. Խաբգ.

այստեղ։ Աղօթքն ես կը գրեմ, սիրելի Բաբալէ, գրած թուղթը պէտք է կպցնես այն կողմը, որտեղ որ ցաւ է զգում։ այդպէս թող մնայ երկու երեք օր, թէ որ գլխացաւ է՝ իսկոյն կ՚անհետանայ։

— Տեսնո՞ւմ էք, ընթերցող. իշխանուհի Դարեջանին ես անուսում էի համարում ու նա այդպէս բաներ է իմացել։ Հիմայ միտս եկաւ որ դրա էլիսաբէթ հարսը, որի մասին արդէն երկու տեղ չիշեցինք, ծածուկ լուրեր էր տարածում թէ Դարեջանը ջադու անել է իմանում ու թէ այդ պատճառով էլ Աստուած նրանից խռովել է ու որդի չէ տալիս։ Ինչպէ՞ս հաւատանք այդպիսի զրպարտութեան։ Սակայն էլիսաբէթը երդումատուաք էր լինում թէ այդպէս է։ Բայց էլի չեմ հաւատայ. հարսը — ինչպէս որ յայտնի կը լինի ձեզ մեր օրհնուած բարքերից—հարսի թշնամի է։ Մի՞թէ միայն այդ բամբասանքն է արել էլիսաբէթը Դարեջանի մասին։

Այդ միջոցին շունը, որ պառկած էր մի քիչ այն կողմ ու խրել էր քիթը հողի մէջ, հաչեց. բայց հէնց որ աչքը բացեց ու տեսաւ եկող երկու կանանց՝ նորից ձայնը կտրեց ու փնթփնթալով կոխեց էլի իւր քիթը ոտներով փորած հողի մէջ։ Դարեջանն էլ գլուխը բարձրացրեց այդ ձայնի վրայ ու տեսաւ իշխանուհի էլիսաբէթին և նրա սրտապակաս, գլխի փաթաթանից զրկուած աղախնին։

Դարեջանը ոտքի կանգնեց։

— Համեցէ՛ք, սիրելի հարս, — դարձաւ նա դէպի էլիսաբէթը, հազիւ մեզ միտդ ես բերել։

— Դու չը մոռանես, ժամանակ չէի ունենում։ Հա՛յ այս, հա՛յ այն, տուն է, տեղ է՝ խօ գիտե՞ս հրամանքդ։

— Ա՛յս կողմն համեցէք, այս կողմն աւելի հով է, — պատասխանեց Դարեջանը։

— Միևնոյնն է, — ասաց էլիսաբէթն ու դուրս պոկելով ոտից կռօյի չուստիքը, նստեց գորգի վրայ, Դարեջանի կողքին։

— Ուրիշ ինչպէ՞ս էք, սիրելի հարս. լա՞ւ է արդեօք իմ տէգը Դաւիթը, — սկսեց դարձեալ Դարեջանը։

— Լաւ ենք, — պատասխանեց էլիսաբէթը։

— Տէգրս տա՛նն է։

— Մի՞թէ այդպիսի մի ժամանակ կալուածքի ու վարուցանքի տէր տղամարդը տանը կը նստի. արդէն երկու օր է այնտեղ է, — ասաց

Էլիսաբէթը մի առանձին նշանակութեամբ ու ակամայ աչք գցեց Լուարսաբի վրայ, որ զբօսնում էր յեռ ու առաջ գնալով և որի ոտներին էր կախ վարուցանքն էլ ու կալուածն էլ։

Դարեջանը վիրաւորուեց։ Նա ենթադրեց որ Էլիսաբէթը դիտմամբ մտրակը Լուարսաբի կողմն ուղղեց։

—Ի հարկէ, ով որ մի մարդ չունի, որին որ կարողանալ տան կառավարութիւնը յանձնել և ով որ աշնպէս է մեծացել փոքրութիւնից որին ոչ արեւը կարող է այրել և ոչ ցուրտը մրսացնել—նա տանը չի մնայ. իմ Լուարսաբը այդպէս չի կարող անել։

—Մի՞թէ ես նրան ունէի աչքի առաջ,—սկսեց Էլիսաբէթը։

—Ես էլ այդ պատճառով չեմ խօսում—վրայ բերեց Դարեջանը. ես միայն այն էի ուզում ասել թէ դեռ ևս իմ Լուարսաբը այնպիսի մի նեղութիւն չէ տեսել որ գիւղացութիւն անի։

—Գիւղացութիւն անե՞լ... ինչ էք հրամայում, ի՛մ հարս։ Զէ, ձեր արեւը գիտենայ։ Մի՞թէ ով որ բերք ժողովելու ժամանակ տանը չէ նստում՝ կարիքի մէ՞ջն է կամ գիւղացութիւն է անում ու, վարձկան մշակի նման հնձելիս, ճորտերի հետ քրտինքաքամ լինո՞ւմ։ Զէ, դուք չը մեռնէք։ Վեր առէք, օրինակ, ձեր տէգրին. մի՞թէ նա աղքատ գիւղացի է կամ աղքատ երևում երբ որ արտումն է լինում։ ամենևի՛ն, ձեր արեւը։ Մշակներն այնտեղ հնձում են, իսկ նա ինչպէս որ վայել է թաւադի որդու պատուականութեան՝ մի սիրուն բազէ ունի նստացրած ձեռքին ու որսորդութիւն է անում։ Երէկ երեկոյ էլ, երբ որ ծառան տուն եկաւ, հետը մի խուրջին կաքաւ էր ուղարկել։ Ի՞նչ ստորանալու բան կայ այդտեղ, թէ ձեր Աստուածը կը սիրէք։ Թագաւորներ են որս անում, մի՞թէ նրա համար ստորութիւն է։

—Զէ, ձեր արեւը, սիրելի հարս, ես տէգրիս վրայ չէի ակնարկում։ Մի՞թէ նա էլ Լուարսաբի եղբայրը չէ—մի արիւնից ու մի մսից։ Մի՞թէ չը գիտեմ որ նա իւր ձեռքերը չի պառաւացնի մանգաղ բռնելով և ոչ էլ այս անտանելի շոքերին կ՝այրուի։ Մի՞թէ չը գիտեմ որ իսկական թաւադի արիւն ունեցող որդին լայեղ չի անի այդպիսի բան. և յիրաւի, ի՞նչ լայեղ անելու բան էլ է. թաւադի վրայ պէտք է թաւադութիւն երևայ, շինականի վրայ՝ շինականութիւն։

—Ճշմարի՛տ խօսք է, ձեր արևը։

—Սխր չի կարելի, է՛. լեռն ու հովիտը ո՞վ է հաւասարացրել։

—Ոչո՛ ք, ձեր արևը, ո՞վ կարող է Աստուծու հրամանի դէմ գնալ։

Այդ միջոցին Դարեջանը ոտի ձայն լսեց. յետ նայեց և տեսաւ իւր փոքրիկ աղախին Լամազիսէուլին, ձեռքին բռնած մի ինչոր գրած թուղթ և գլուխը կոտրած դեղի սրակ, որ Թանաքամանի դեր էր կատարում։

—Ի՞նչ եղար մինչև հիմայ, ո՞վ գիտէ արդէն գնացած է,—բարկացաւ Դարեջանը։

—Դեռ չի գնացել, այստեղ է խրճթումը՝ Թափլուայի հետ,—պատասխանեց աղախինը։

—Դէ լաւ,—ասաց Դարեջանն և գրեց թուղթը ծնկան վրայ, սկսելով գրել գլխացաւի աղօթքը։ Այդ միջոցին Լուարսաբն էլ՝ շալարն ու ախալուխը հագած՝ եկաւ քաղաքավարի կէրպով հարց ու բարով արեց իւր հարսի հետ ու գլորուեց հէնց գորգի մօտ եղած կանաչ խոտում։ Ցետոյ չիբուխի կոթը դէմ տուեց իւր պատուական փորին ու սկսեց դիտել՝ մէջքի վրայ պառկած՝ երկնքի հաստատութիւնը։

Մի լաւ պատկեր էր ներկայացնում այդ խումբը։ Կը նկարագրեմ, եթէ ոյժս պատի։ Առաջ աղախնից սկսեմ։

Մի ծիծաղելի արարած էր այդ Լամազիսէուլը. մի անշնորհք կերպով պարարուացած, կարճահասակ ու կեղտոտ։ Հագած ունէր մի կոպիտ չթի դէրիայ, որի գոյնը՝ նրա կեղտոտութեան պատճառով՝ անկարելի էր իմանալ։ Փէշերը տեղ տեղ դուրս էր այրուած՝ չափազանց շատ կրակի մօտ կանգնելուց, իսկ ափերը՝ փտած ու գլլուած. պատռած տեղերից երևում էր դէրիայի տակը շրջանաձև չախ արած մի ինչ որ փտած վերմակի կտոր—իբր թէ իւրկայ։ Այ, հողը գլխի՛դ, դո՞ւ էլ ես իւրկայ ուզում։ Գլխին ունէր իւր տիրուհու փոխած ու տեղ աեղ դուրս պոկուած չթի փաթաթան։ Այդ ծակերից դուրս էին ցցուում գունդ-գունդ՝ մութաքի բրդի նման գզգզուած սև—ներեցէք ասել—անիծոտ ու չը սանդրուած մազերը։ Ոտի կունկները ճեղքոտած, ոտները ածուխի պէս սև, ձեռքերը թարմ ընկուզի կճեպից ներկուած, քիթն ու երեսը պղնձների մռով աղտոտուած,—ահա՝ այսպէս էր այն արարածը, որին Դարեջանը

«Լամազիսաէուլ» (գեղեցկուհի) էր անուանում և որը ձեռքերը խաչած նայում էր մազը թափած գորգին։ Գորգի վրայ բազմած էին երկու պատուական ու հետաքրքիր իշխանուհիք, երկուսն՝ բայց տարբեր տարբեր տեսակից. մինը պարարտ ու կարմիր, միւսը՝ նիհար ու դեղին։ Պարարտը գլուխը կախ գրում է, նիհարը հետախոյզ աչքով հետևում է գրողի ձեռքին, որպէսզի մի կերպով կարողանայ գլխի ընկնել թէ նա ի՞նչ է գրում։ Երբեմն նա աղախնին աչքով է անում ու գլուխը շարժում, ուզենալով հասկացնել նրան թէ «մի փոքր աւելի որ տիրուհին ասում էր թէ գնաց՝ ո՞ւմ համար էր ասում»։ Աղախինն էլ այնտեղից նրան նշաններով գլխի է գցում, բայց նա ոչինչ չէ հասկանում։ Այն ժամանակ փոքրիկ աղջիկը ծածկում է բերանը ձեռքով ու գլուխը մի կողմ շուռ տալիս իբրև թէ իւր խելքում ծիծաղելով որ Էլիսաբէթը ճիգ է թափում գլխի ընկնել ու չէ յաջողում և իբրև թէ մի կողմից էլ ամաչում է որ չի կարողանում ծիծաղը պահել իւր տիրուհու հարսի ներկայութեամբ։ Մի կողմը խոտի վրայ ախորժանքով ու ծանր շունչ էր քաշում Լուարսաբը՝ մէջքի վրայ պառկած. ծուխ է բարձրացնում՝ իւր չիբուխից և՝ մինչև որ աչքերում արտասունք չ՚երևայ՝ հետևում է համբերատարութեամբ ծխի վեր ելնելուն, որպէսզի տեսնէ թէ կարո՞ղ է արդեօք նա հասնել մինչև ամպերը։ Այն կողմը, գորգի ծայրին և ցանկի տակ պառկած է մեր ծանօթ պառաւ շունը՝ կրկին իւր քիթը փորուած հողի մէջ կոխած ու մի ինչ որ ուժից ընկած մարդու պէս աչքերը կուչ բերած։ Ամեն մի աղմուկի վրայ ծանր կերպով բաց է անում նա իւր աչքերը ու մի գժգոհ մարդու նման հէւում՝ իբր թէ ուզենալով բարկանալ, որ այդպէս շուտ շուտ նրա քունը կոտրում են։ Մի քիչ հեռու սարքւած է մի կեղտոտ սամովար որի կողքին նստած փոքրիկ աղախնից էլ աղտոտ ու գծլտւած փոքրիկ ծառան փչում է, հա՛ փչում նրա մէջ՝ որքան որ ոյժ ունի։ Մերթընդմերթ ծածուկ նայում է նա այն կողմը որտեղ որ պառկած է այնքան երջանիկ և հանգիստ կերպով տան շունը, նայում է և կարծես երանի՛ տալիս նրա կենցաղավարութեան ու ասում իւր սրտում՝ երանի՛ քեզ որ շուն ես, երանի՛ ե՛ս էլ շուն եղած լինէ՛ի։

Անպիտան երկրի այդ գարշելի պատկերը ծիծաղելի կերպով ներդաշնակում էր հարաւի հոյակապ երկնքին, նրա խոր ու բաց—

կապոյտ կամարին, որի վրայ պորտապորտ հիսուում էր մի միալար գծով՝ սարերի մուգ-կապոյտ շղթան։

Մի քիչ ժամանակ անցկացաւ։ Դարեջանն աւարտեց աղօթք գրելը և տուեց թուղթը աղախնին հետևեալ խրատով՝ ասա՛ թող այնպէս վարուի, ինչպէս ես իրան ասել եմ։

Ապա շուռ եկաւ դէպի Էլիսաբէթն ու սկսեց խօսակցել։ Լուարսաբը դեռ էլի մտածում էր ու ծխեցնում չիբուխը։

—Հացի բերքն ինչպէ՞ս է,—հարցրեց Դարեջանը։

—Ձեր արևը, անցեալ տարուանից քիչ։ Ձեր տէգրը երեսուն սայլի յոյս ունի,—պարծեցաւ Եղիսաբէթը։

—Այդ, բարեկամ, լաւ հունձ է։ Երեսուն սայլը հանաք չէ, մենք էլ կունենանք այդքան, բայց մեր հնձելու տեղերը երկու ձերինի չափ են,—փչեց իւր կարգին Դարեջանը։

—Ի՞նչ էք հրամայում, իմ հարս, մեզանից աւել ինչո՞ւ պէտք է ունենայիք։ Այս տարի մենք մեծ տեղեր ունէինք հնձելու։

—Ինչո՞ւ, թէ Աստուածդ կը սիրես։ Մենք արդէն օգոստոսի կէսին արտերը վառած ունէինք, մինչդեռ դուք սեպտեմբերին էլ չէիք վառել։

—Չէ, ձեր առևը, մենք ձեզանից վաղ ենք սկսել։ Մենք մեծ վար ու ցանք ունեցանք։

—Ահա՛, սիրելիս, ուզում էք Լուասաբին հարցնենք։ Դա տղամարդ է, աւելի լաւ կ'իմանայ։ Լուարսա՛բ, ձայն տուեց նա մարդուն։

—Հ՞ը,—հարցրեց Լուարսաբը և շուռ տուեց վիզը դէպի իւր կինը։

—Հարսդ ասում է թէ մենք նրանցից պակաս վար ենք ունեցել այս տարի։

—Է՛հ, ի՞նչ ես ասում, իմ հարս. այս տարի մենք չորս ձեր չափ վար ենք ունեցել (այսպիսի բաներում սարսափելի փչող էր Լուարսաբը) ի՞նչ ես ասում... իմ բերքի չափ բերք ամբողջ Կախեթում ոչ ոք չէր ստանում, մինչև անգամ Վրաստանում էլ շատ քչերը կ'ունենան։ Կը տեսնես թէ ո՛րքան դէզ կը շարեմ կալի վրայ. այնքան շարեմ, այնքան շարեմ որ... որ... հապա ի՞նչ ասեմ, կ'ուզես տասներկու այս տան չափ – կարծես թէ չէ՞ կարող Լուարսաբը։ Փի՛է. վառը՝ իմ վառս էր որ էր։ Այս էլ դարձաւ անցեալ տարայ

գինու հարցը. իմ գինու չափ գինի ամբողջ Կախեթում երկու մարդ չի ունենայ։ Քարթլու կողմերը խո՝ կէսի կէսն էլ չեն ստանայ։ Հապա՞։ Թէ որ ասածս ճիշտ չը լինի՝ հապա ո՞րտեղից եմ այսքան լաւ ապրում։ Ո՞րտեղից.—մի՞թէ ես էլ Լեւանի պէս սայլերս վարձով եմ տալիս։ Ես կարո՞ղ եմ իմ թաւադական արիւնս անպատուել։ Հայ խո չե՞մ ես. չէ՞ որ ես լաւ օջախի և ազգի զաւակ եմ...

Դեռ էլի ուզում էր ինչ որ ասել, բայց Էլիսաբէթն ընդհատեց նրան։

—Իրաւ, իմ տեգր, ճի՞շդ է որ Լեւոնը վարձով է տալիս իւր սայլերը։

—Ճիշդ է, հապա՞, ամո՛թ նրան որ ազգի խախտիչ է դարձել։

—Նիկոլոզն էլ է եղել տալիս,—աւելացրեց Դարեջանը։

—Տալիս է—պատասխանեց Լուարսաբը։

—Վա՛յ, խայտառակութի՛ւն նրանք, լաւ ազգի որդիք են եղել հա՛,—ասաց Էլիսաբէթը։

—Երանի գոնէ թաւադի որդի եղած չը լիներ,—աւելացրեց ցաւած սրտով Դարեջանը։

—Ցաւն էլ այդ է որ թաւադի որդի է,—ասաց վշտացած Լուարսաբը. թաւադի որդի որ չը լիներ՝—ջհանդամը նրա գլուխը։ Հասարակ գիւղացի լինէր կամ հայ լինէր,– էլի ոչինչ. բայց ինձ սպանողն այն է, որ նա թաւադի որդի է։ Ի՞նչ վատ կերպով փչացուեց ժողովուրդը, ձեր ցաւը տանեմ. այն տեղն էլ հասայ որ իմ աչքով տեսայ թէ թաւադի որդին վարձով սայլեր է մանածում։

—Ցեռոյ ի՞նչ հօրն ու մօր որդի,—վրայ բերեց Դարեջանը։

—Այդ ասա՛ է՛,—ձայն տուեց Լուարսաբը։

—Ինչո՞ւ պէտք է մարդն այդպէս կորցնի իւր պատիւը,—ասաց իւր կարգին Էլիսաբէթը։

—Արանից յետոյ էլ ի՞նչով պէտք է գիւղացին և թաւադը միմեանցից զանազանուեն։ Գիւղացին էլ է իւր սայլերն վարձի ուղարկում, թաւադի որդին էլ. նա էլ վարձով է ապրում, սա էլ։ Ինչո՞վ պէտք է զանազանուեն,—հարցրեց Լուարսաբը։

—Ոչնչով, ձեր արևը,—հաւատացրեց հարսը։

—Ի հարկէ որ ոչնչով,—հաստատեց կինն էլ։

—Սոված որ մեռնելիս լինէի, սոված՛ եմ ասում, և հարիւր

սայլ ունենալի կապած՝—գլուխս մեռնի թէ ես այդպիսի բան լայեղ անէի։ Իսկ դո՞ւ, իմ հարս։

—Վո՛յ, ինձ գեսինը դնես թէ լայեղ անէի. իմ ձեռքովս գլուխս կը սպանէի ու լայեղ չէի անի։

—Իսկ դո՞ւ, Դարեջան,—հարցրեց Թաւադը։

—Ես էլ ես,—պատասխանեց նա։

—Ուրեմն ո՛չ էլ ե՛ս,—ասաց Լուարսաբը այնպիսի մի ձայնով՝ որ կարծես թէ այդ երեքի կարծիքով երեք աշխարհի բաղդ էր վճռւում։

—Զէ՛, ժամանակը շատ է փոխուել, իմ հարս—երկարացրեց իւր խօսքը Լուարսաբը։ Ժողովուրդը փչացուեցաւ, արիւնը պղտորուեցաւ։ Ո՞վ կարող էր մեր ժամանակ մտքովն անցկացնել թէ Թաւադի որդին իւր գլուխը կը խայտառակի՝ սայլերը վարձով կը տայ։ Զէի՞նք քարկոծի. դլխին դնիս չէի՞նք ածի։ Բայց ա՞յժմ։—Աստուած անիծի՛—գինեվաճառութիւն են անում։ Լաւած բա՞ն է դա. Թաւադի որդիքը գինեվաճառութիւն են անո՛ւմ... Ո՞հ, Աստուած, ինչո՞ւ ջրհեղեղ չի գալիս։ Հայ են դարձել, ճի՛շդ հայ են դարձել. հիմայ միայն այն է պակաս որ արշինը դնեն կռան տակին, գիւղէ գիւղ ընկնեն ու «լաւ չի՛թ, լաւ չի՛թ» գոռան։

—Ա՛յդ էլ կանեն, ձեր արևը,—ասաց Էլիսաբէթը. երանի՝ քանի որ ես կամ՝ Աստուած ցոյց չը տայ ինձ այդ ժամանակը։

—Կա՞նեն, գլուխս չը մեռնի որ կ՝անեն,—վրայ բերեց սրտի ցաւով Լուարսաբը. բարեկամ, որ էլ արիւն չը կա՞յ. փչացուեցաւ արիւնը, պղտորուեցաւ։

—Ճիշտ որ փչացուեցաւ,—վրայ բերեց Դարեջանը։

—Ահա՛ ձեզ մի օրինակ, գիտէ՞ք երէկ Զաքարիայի կինը ի՞նչ է արել։ Ծառան նրա խօսքից դուրս է եկել... Զէ՞ որ Զաքարիայի կինը շատ չար է։

—Այն էլ ի՞նչպէս,—հաստատեց Դարեջանը, սարսափ յայտնելով։

—Ծառան նրան ընդիմադրել է,—սկսեց դարձեալ Էլիսաբէթը—նա ընկել է յետևից, դուրս է պոկել իւր ոտից չը գիտեմ չուտին թէ քոշը—երևի քոշը—ու այնքան տուել է նրանով ծառային, որ մարմինն ուռեցրել է։

—Թէ Աստուածդ կը սիրե՞ս,—հարցրեց զարմանքով Լուարսաբը։

—Ձեր արևը։

—Այս ի՞նչ եմ լսում, ձեր հոգուն մեռնեմ. կարելի է փոքրիկ ծառայի՞ն է ծեծել։

—Այդ է որ՝ չէ։ Փոքրիկին որ ծեծի, այդ ոչինչ չի նշանակում. ես էլ եմ ծեծում,—ասաց Էլիսաբէթը։

—Ե՛ս էլ, ձեր արևը, ասաց Դարեջանը։ Փոքրիկ ծառայ և փոքրիկ աղախին՝ միևնոյն բանն է։ Ինչպէս որ մի տանտիկնոջ ամենևին չի կարելի պախարակել փոքրիկ աղախնուն ծեծելու համար—նոյնպէս և փոքրիկ ծառայի համար։

—Ի հարկէ,—ասաց Էլիսաբէթը. փոքր ծառաներին ծեծելու համար ո՞ւմը կարելի է յանդիմանել։ Բայց նրա ծեծուածը մեծ տղամարդ է եղել. մի՞թէ կարելի է ընդունել որ մի կին այդպիսի հասակաւորի հետ այդպէս վարուի։

—Տէ՛ր ողորմած Աստուած,—ասաց երեսը խաչակնքելով Լուարսաբը։ Այս ի՞նչ եմ լսում թէ Աստուած կը սիրէք. կինը պէտք է այնպէս իւր գլխից ձե՞ռք վերցնի որ տղամարդուն ծեծի՞։ Ծեծը դեռ ոչինչ. ո՞վ կարող է դրա համար տիրոջը պախարակել. նրա տէրը չե՞մ՝—կ՚ուզեմ կը ծեծեմ, կ՚ուզեմ՝ չէ։ Բայց մա՛րդը պէտք է մարդուն ծեծի, կնոջ մասին ո՞վ է այդպիսի բան լսած, ո՞վ է ասում։ Աղախին էլ ունի, թո՛ղ ինչքան ուզի ծեծի, այդտեղ չը լայեղ անելու բան չը կայ, բայց տղամարդո՞ւն... Տէր, ողորմեա՛, Տէր, ողորմեա՛։

—Դեռ այդ ոչինչ... ուզում էր սկսել նորից Էլիսաբէթը իւր բամբասանքները, բայց այդ միջոցին չայ մօտ բերին։

—Խօսքներդ չը մոռանաք, իմ հարս, ընդհատեց նրան Դարեջանը, բայց չայ համեցէ՛ք։

—Համեցէ՛ք, միևնոյն է, պատասխանեց Էլիսաբէթն ու ձեռք մեկնեց դէպի գաւաթը։

(Կը շարունակուի)